



Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԳՈՒԴԵՆ ՓԵԼԻՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ մասնակցին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԳՈՒԴԵՆ ՓԵԼԻՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն)՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ), ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվությունը և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ ՖՀՄՍ): Այդ պատասխանատվությունը ներառում է՝ սխալների կամ խարդախության ազդեցությունից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման պահանջներին համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակումը, ներդրումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և դրա կիրառման ապահովումը, ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք ղեկավարվենք աուդիտորի վարքագծի կանոններով և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից և ներառում են ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե՞ խարդախությամբ և թե՞ սխալներով: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել և դրան համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր, բայց նպատակ չունենալով կարծիք արտահայտել ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների ողջամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Որակավորված Աուդիտոր, գրանցված ՀՀ պետական ռեգիստրում,
 Աուդիտորական ծառայությունների իրականացման ԱԾ թիվ 013 լիցենզիա,
 տրված ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները «ԳՈԼԴԵՆ ՓԵԼԻՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2010թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի:

Մենք աուդիտի չենք ենթարկել հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ժամանակաշրջանի համար պատրաստված Ընկերության ֆինանսական հաշվետվությունները (31 դեկտեմբերի 2009թ. դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար), ուստի մենք դրանց վերաբերյալ կարծիք չենք արտահայտում:

«Ամերիա Աուդիտ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն

Աուդիտոր

Երևան
2011թ. հունիսի 28



Ա. Անդրեասյան

Հ. Հովհաննիսյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«ԳՈՒԴԵՆ ՓԵԼԻՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ
 դեկտեմբերի 31-ի դրությամբ
 (հազար դրամ)

	Ծան.	2010 (աուդիտ անցած)	2009 (աուդիտ անցած)
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	3	2,110,923	961,656
Տրված կանխավճարներ հիմնական միջոցների համար	4	526,962	53,897
Ոչ նյութական ակտիվներ	5	10	35
		<u>2,637,895</u>	<u>1,015,588</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	6	20,070	25,878
Տրված ընթացիկ կանխավճարներ		3,778	58
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով		2,866	2,721
Ընթ. ակտիվներ հարկերի և պարտ. վճարների գծով	7	228,140	44,466
Դրամական միջոցներ	8	358,563	87,996
		<u>613,417</u>	<u>161,119</u>
		3,251,312	1,176,707
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ			
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
<i>Սեփական կապիտալ</i>			
Կանոնադրական կապիտալ		2,919,526	924,028
Վերագնահատումից տարբերություններ		91,933	97,672
Կուտակված շահույթ		25,654	(51,865)
		<u>3,037,113</u>	<u>969,835</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Երկարաժամկետ փոխառություններ	9	183,948	183,948
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	11,470	12,869
		<u>195,418</u>	<u>196,817</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով		8,310	3,840
Ընթացիկ պահուստներ	10	10,007	5,751
Ստացված ընթացիկ կանխավճարներ		464	464
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		<u>18,781</u>	<u>10,055</u>
		3,251,312	1,176,707

Սարգիս Ղազարյան
 Գլխավոր տնօրեն



Գայանե Միրզոյան
 Գլխավոր հաշվապահ

«ԳՈՒԴԵՆ ՓԵԼԻՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ
 Ֆինանսական հաշվետվություններ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
 «ԳՈՒԴԵՆ ՓԵԼԻՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ
 ղեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2010	(հազար դրամ)
Ծան.	(աուդիտ անցած)	2009 (աուդիտ չանցած)
Հյուրանոցային ծառայությունների մատուցումից հասույթ	189,848	137,570
Ռեստորանից և բարից հասույթ	135,570	87,131
Այլ հյուրանոցային տարածքների տրամադրումից հասույթ	10,322	8,004
Այլ եկամուտ	11	54
	<u>335,751</u>	<u>232,759</u>
Արտարժույթային վերագնահատումներից զուտ եկամուտ	(2,757)	469
Էլեկտրաէներգիա, գազ, հեռախոս, քիմաբրուս	(57,362)	(56,293)
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախս	(49,117)	(67,653)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(25)	(48)
Գործուղման և ներկայացուցչական	(3,477)	(125)
Ռեստորանում և բարում վաճառված մթերքի ծախս	(52,072)	(44,098)
Աշխատավարձի գծով ծախսեր	(54,985)	(56,433)
Վառելիքի ծախս	(10,441)	(8,616)
Տնտեսական նշանակության նյութածախս	(5,057)	(3,251)
Բանկային միջնորդավճարներ սպասարկման վճարներ	(4,592)	(3,798)
Հողի հարկ և գույքահարկ	(3,733)	(4,985)
Մարկետինգի և գովազդի ծախսեր	(2,843)	(6,079)
Աուդիտ և խորհրդատվություն	(2,673)	-
Հյուրանոցային համարներում սպասարկված մթերքի ծախս	(2,434)	(2,550)
Գրասենյակային պիտույքներ և գրասենյակի ինտերնետ	(1,466)	(1,971)
Գործակալների միջնորդավճարներ	(986)	(1,088)
Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	(569)	(7,780)
Այլ ծախսեր	(4,419)	(3,133)
Շահույթ հարկումից առաջ	<u>76,743</u>	<u>(34,673)</u>
Հարկային ծախս	11	(3,211)
	<u>71,780</u>	<u>(37,884)</u>

Սարգիս Ղազարյան
 Գլխավոր տնօրեն



Գայանե Միրզոյան
 Գլխավոր հաշվապահ